Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները հետպատերազմյան իրավիճակում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Արցախյան երկրորդ պատերազմում բազմաթիվ էին Ադրբեջանի կողմից միջազգային հումանիտար իրավունքի խախտման, Արցախի խաղաղ բնակչության թիրախավորման և մարդու իրավունքների խախտման դեպքերը: Պատերազմի ավարտից հետո Արցախն ու Հայաստանը թևակոխեցին հումանիտար խորը ճգնաժամի փուլ՝ ավելի քան 100 հազար բռնի տեղահանված անձանց կյանքի, առողջության, անվտանգության և նվազագույն կենսապայմանների ապահովման մեծածավալ և տարաբնույթ խնդիրներով:

Չճանաչված երկրի խոցելի բնակիչները. հումանիտար ճգնաժամ

Պատերազմի առաջին օրերից ՀՀ և ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանների գրասենյակները փաստագրել և համապատասխան կառույցներին են ուղարկել Ադրբեջանի կողմից էթնիկ հայերի նկատմամբ կատարված վայրագությունների, քաղաքացիական բնակչության թիրախավորման և արգելված զինատեսակների օգտագործման, հայ ռազմագերիների խոշտանգման դեպքերը, էթնիկ հայերի նկատմամբ պետական մակարդակով խրախուսվող ատելության խոսքը: Այդուհանդերձ, միջազգային հանրությունը բարձրաձայնված դեպքերին արագ, արդյունավետ ու հասցեական չի արձագանքել և չի արձագանքում:

ՀՀ և ԱՀ պատկան մարմինները փորձել են նաև կազմակերպել միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր Արցախ՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և մարդու իրավունքների խախտման դեպքերն արձանագրելու համար: Այդ ջանքերը հիմնականում չեն հաջողել՝ պայմանավորված միջազգային կառույցների մանդատի առանձնահատկություններով, և Ադրբեջանի՝ Արցախում միջազգային որևէ ներգրավվածություն բացառելու տարիների քաղաքականության արդյունքում:

Մինչդեռ, **մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներ են իրավունքների համընդհանրությունը և որևէ հիմքով խտրականության բացառումը**: Այս սկզբունքը, սակայն, Արցախում խախտվել է տասնամյակներ շարունակ, իսկ առավել ցայտուն՝ վերջին պատերազմի ժամանակ՝ **մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմների բացակայության պատճառով: Միջազգային կառույցներն անմիջական գործունեություն չեն ծավալում** Արցախում տարբեր փաստարկներով:

Անմիջական գործունեություն ծավալելու սահմանափակումներին զուգահեռ միջազգային կառույցները հաճախ չեն ապահովում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ պատկան մարմինների հաղորդումներին **արագ արձագանքելու մեխանիզմներ**: Միջազգային հանրությունն այս դեպքում ոչ թե հանդես է գալիս որպես կանխարգելման կամ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմ, այլ ներգրավվում է պոստ-ֆակտում՝ աշխատանքներ է տանում մարդասիրական ճգնաժամի հետևանքները մեղմելու ուղղությամբ:

Արցախի բնակիչները ստիպված էին լքել բնակության վայրերը, մի մասը՝ շուրջ 60 հազարը, վերադարձել է Արցախ, իսկ մեծամասնությունը ապաստանել է Հայաստանում: Սկզբնական շրջանում ժամանակավոր կացարանների մեծ մասը տրամադրել են անհատները, զգալի մասին էլ կացարանի հարցում օժանդակել են քաղաքացիական հասարակության կառույցներն ու դրանց ներկայացուցիչները, ապա նոր մշակվել և ներդրվել են պետական աջակցության ծրագրեր: Հարկ է, սակայն, նշել արցախահայերի կարիքների գնահատման և բավարարման համակարգված մոտեցման բացակայությունը, ինչը խոչընդոտ է մարդու իրավունքների կայուն և երկարաժամկետ պաշտպանությանը: Ընդ որում, կարևոր է բազմամասնագիտական աջակցության տրամադրումը՝ պատերազմից տուժած անձանց ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև անվտանգային և հոգեբանական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքները:

Արցախում մարդու իրավունքների, այդ թվում՝ կյանքի իրավունքի պաշտպանության մարտահրավերներն էլ ավելի սուր են. անգամ եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

հայկական կողմը տվել է զոհեր և գերեվարվածներ: Ակնհայտ է, որ արցախահայերի հիմնարար իրավունքների պաշտպանության լրացուցիչ միջոցառումներ են անհրաժեշտ:

Ի՞նչ անել առաջին հերթին

Նախևառաջ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Արցախում միջազգային կառույցների անմիջական ներգրավումն ընդլայնելու ուղղությամբ: Խիստ կարևոր է, որ միջազգային կազմակերպություններն ու օտարերկրյա պետությունները հումանիտար աջակցություն ցուցաբերեն ոչ միայն Հայաստանում ապաստանած տեղահանված արցախահայերին, այլև Արցախ վերադարձածներին: Այս առումով նշանակալի է Ռուսաստանի կողմից տրամադրվող՝ պետական և ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրված մեծածավալ աջակցությունը: Այսպես, գոնե Ռուսաստանի՝ ՄԱԿ-ի ԱԽ անդամ երկրի համար Արցախի չճանաչված լինելը հիմք չէ աջակցություն չտրամադրելու համար, և այս օրինակը հարկ է բարձրաձայնել: Եթե առանձին դեպքերում պետական մարմինների հետ համագործակցությունը խնդրահարույց է, համագործակցություն կարող է ծավալվել տեղական ՔՀԿ-ների հետ: Այնուամենայնիվ, անթույլատրելի է, արցախյան պետական մարմինների հետ աշխատանքը համարել խնդրահարույց, քանի որ գործում է հայտնի՝ «ներգրավվածությունը չի նշանակում ճանաչում» սկզբունքը:

Հարկավոր է ինտենսիվ կերպով աշխատել միջազգային կառույցների հետ, որպեսզի վերջիններս ձեռնարկեն մարդու իրավունքների համընդհանրության սկզբունքի երաշխավորման համար անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ դիտարկեն Արցախում անմիջական իրավապաշտպան գործունեություն իրականացնելու կամ մարդու իրավունքների ոտնահարման մասին պատկան մարմինների հաղորդումներին արագ արձագանքման մեխանիզմներ ներդնելու հնարավորությունները:

Անգամ այն դեպքերում, երբ առանձին կազմակերպության մանդատը թույլ չի տալիս անմիջական գործունեություն ծավալել և մարդու իրավունքների մշտադիտարկում իրականացնել հակամարտության գոտում, հարկ է օրակարգ բերել ՀՀ ՄԻՊ գրասենյակը՝ որպես միջազգային հանրության կողմից արագ արձագանքման մեխանիզմ ճանաչելու անհրաժեշտությունը: ՀՀ ՄԻՊ գրասենյակը, միջազգային կոնվենցիաներով և ներազգային օրենսդրությամբ սահմանված կարգով, արդեն իսկ ստանձնել է նման մանդատներ երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, խոշտանգումների կանխարգելման ոլորտներում:

Հայատյացությունը և էթնիկ հայերի նկատմամբ վայրագությունները ենթադրում են հայերի՝ Արցախում ապրելու գոյաբանական մարտահրավերներ, որոնք խախտում են արցախահայերի սեփականության, կյանքի ու անվտանգության և այլ հիմնարար իրավունքները: Հավաքագրված ապացույցները հարկ է օգտագործել միջազգային տարբեր հարթակներում արցախահայերի իրավունքները պաշտպանելու համար: Ընդ որում, ուշադրության պետք է արժանանան ոչ միայն ապացույցների փաստագրման, այլև դրանց հաղորդակցման խնդիրները: Արցախահայերի իրավունքների պաշտպանությունը պետք է դառնա արտաքին աշխարհի հետ հարաբերվելու մեր ուղենիշը, ընդ որում, թվերը պետք է ներկայացվեն պատկերավոր, իսկ վիճակագրությունը՝ պատմությունների տեսքով:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 22-ին կայացած՝ «Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները հետպատերազմյան իրավիճակում և միջազգային գործիքների արդյունավետությունը» խորագրով առանց հրումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին ՀՀ և ԱՀ պետական մարմինների և ՀՀ ԱԺ պաշտոնյաներ, անկախ վերլուծաբաններ, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ: